# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

**ք. Ջերմուկ** **26/դեկտեմբերի/2019 թ.**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ......6..... անդամներ:

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Ս. Մարգարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հ. Դավթյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյանը**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը**

**Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թաղևոսյանը**

***Լսեցին***
***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*ԶԵկ. Արմինե Ղազարյան*

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի արտահերթ նիստի հետևյալ օ ր ա կ ա ր գ ը.

1.1. Ջերմուկ համայնքում սուբվենցիոն ծրագրերի իրականացմամբ պայմանավորված համայնքի 2019 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները հաստատելու մասին.

*զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

*Կողմ------------ 6 Դեմ------------ 0 Ձեռնպահ------------ 0*

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92-Ա/

***Լսեցին***

***ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*\/Զեկ. Արմինե Ղազարյան/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝

1. «Ջերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի Ձախափնյակ թաղամասի մասնաշենքի ձմեռային այգու, Կեչուտ գյուղի մասնաշենքի երկու հարկերի, տանիքի և «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մասնաշենքի տանիքի հիմնանորոգում» սոցիալական ենթակառուցվածքների զարգացման սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորմամբ պայմանավորված՝ հաստատել համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 23-ի N 4-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2019 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները.

Ջերմուկ համայնքի «38-01-00-պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով սուբվենցիա» եկամտային և «09.01.01.51-նախադպրոցական կրթություն» գործառնական դասակարգումներով, «5113- շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական ծախսային հոդվածներն համապատասխանաբար ավելացնել 28.930.020 (քսանութ միլիոն ինը հարյուր երեսուն հազար քսան) ՀՀ դրամով՝ վերոնշյալ ծրագրերով կատարվող աշխատանքների ֆինանսավորման համար:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունները հաշվի առնելով՝ ի գիտություն ընդունել Ջերմուկ համայնքի բյուջեն՝ 2019 թվականի դեկտեմբերի 26-ի դրությամբ՝ *եկամուտներ՝ 768.930.020 ՀՀ դրամ*

*ծախսեր՝ 768.930.020 ՀՀ դրամ:*

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Կողմ------------ 6 Դեմ------------ 0 Ձեռնպահ------------ 0*

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93-Ա/

Ավագանու անդամներ՝

| ազգանուն, անուն | ստորագրություն |
|---|---|
| Բաբայան Կավկազ Զավենի | |
| Բաբաջանյան Սանասար Խաչատուրի | |
| Բագրատյան Արտակ Կառլենի | |
| Բունիաթյան Մխիթար Խաչատուրի | |
| Գևորգյան Արտավազդ Վարազդատի | |
| Գրիգորյան Արմեն Գրիշայի | |
| Համբարձումյան Մխիթար Սամվելի | |
| Հովհաննիսյան Նարեկ Հարությունի | |
| Սարգսյան Հասմիկ Ժորայի | |
| Սիմոնյան Արտուշ Էդվարդի | |
| Ստեփանյան Գագիկ Ստեփանի | |

*Ջերմուկ համայնքի ղեկավար՝*

ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ________________

*Նիստն արձանագրեց՝* Գոհար Թադևոսյան________________